ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ-ի նոյեմբերի 17-ից մինչև նոյոմբերի 22-ը Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բավարիայի դաշնային երկրամաս գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Եղիազար Դավթյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, Բավարիայի դաշնային երկրամաս, նոյեմբերի 17-ից մինչև նոյեմբերի 22-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը.**
   Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման» (SE4Resilience) ծրագրի շրջանակներում կազմակերպված «Ապագայի հզորացում՝ ուսումնասիրելով Բավարիայի էներգետիկ անցումը և ճամփորդություն դեպի էներգետիկ ինքնաբավություն և վերականգնվող նորարարություն» խորագրով ուսումնական այցին:

6. **Քննարկված թեմաները.**

Ներածական հանդիպման ժամանկ հայկական պատվիրակության և GIZ-ի Բավարիայի գրասենյակի պատասխանատուների կողմից կարևորվել է ուսումնական այնցը և գործադրվող ջանքերը վերականգնվող էներգետիկայի ոլորտում քաղաքականության բարելավման և նախանշված նպատակներին հասնելու համար:
ՀՀ ՏԿԵ նախարարության տեղական ինքանկառավարման քաղաքականության վարչության պետ Ա. Գիլոյանի կողմից սահիկաշարով ներկայացվել է Հայաստանում համայնքների իրավիճակի վերաբերյալ (կարգավիճակ, ծրագրեր, նպատակներ և մարտահրավերներ) տեղեկատվություն, իսկ էներգետիկայի վարչության

ներկայացուցիչ Կ. Հովսեփյանի կողմց ներկայացվել է Հայաստանի Հանրապետությունում էներգետիկ ոլոտի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այցի ընթացքում կայացած հանդիպումների ժամանկ գերմանացի գործընկերենրի կողմից ներկայացված հիմնական զեկույցները և քննարկումները եղել են հետևյալ թեմաներով.

- Գերմանիայում/Բավարիայում վերականգնվող էներգիայի և էներգետիկ ոլորտի ապագա միտումները,
- Էներգետիկ ինքնաբավության հնարավորությունները և մարտահրավերները. Գերմանիան որպես ածխածնային չեզոք էներգետիկ հատված անցման շարժիչ ուժ,
- Կենսագազի գործարանի թափոնների կողմից ջեռուցվող տեղական ջեռուցման ցանցերը,
- Մասնավոր և համայնքային ֆոտովոլտային համակարգեր՝ մարտկոցների պահեստավորումով և էլեկտրաէներգիայի ինքնասպառմամբ
- Համայնքային հողմային տուրբիններ էներգախնայողության նախագծերի ներկայացում,
- Մեմինգեն քաղաքի համայնքային էներգիայի կառավարման և 2045թ. շենքերի ռազմավարության ներկայացում,
- Անկախ էլեկտրամատակարարման համակարգերի ներկայացում (օրինակների ներկայացում՝ ներառյալ Ուկրաինան, կղզային լուծումները (ցանցից դուրս), լեռնային խրճիթները Բավարիայում),
- Բավարիայում ապակենտրոնացված էներգետիկ անցման վերաբերյալ ներկայացում,
- Այցելություն «Um:welt» էներգետիկ կրթական կենտրոն՝ որպես իրազեկման միջոցառման օրինակ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Գործուղման ընթացքում այցեր են եղել Բավարիա երկրամասի ինքնաբավ էներգետիկ համայնքներ և վերականգնվող էներգետիկայի ոլորտի կազմակերպություններ: Հանդիպումներ և քննարկումներ են եղել համայնքային պատասխանատուների և ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ժամանակ ներկայացվել է վերկանգնվող էներգետիկայի ոլորտում Բավարիայի հաջողված փորձը, ոլոտի համակարգման և կառավարման համար ձևավորված միավորումները, այդ միավորումներին համայնքների և բնակչության մասնակցության ձևերը և մեխանիզմները: Քննարկվել են նաև ներկայացված օրինակները Հայաստանում տեղայնացնելու հնարավորությունները

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Պայմանավորվածություն է ձեռքբերվել՝ ըստ անհրաժեշտության, գերմանական փոձի վերաբերյալ ստանալ/փոխանակվել լրացուցիչ տեղեկատվությամբ:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Էներգետիկ ինքնաբավ համայնքների վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները և փորձառությունները հնարավորության դեպքում կիրառել ՀՀ համայնքներում:
Գերմանացի գործընկերներին առաջարկվել է ծրագրի շրջանակներում այցելել Հայաստան՝ ծանոթանալու հայկական փորձին և տեղում տրամադրել խորհրդատվություն:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Ե. Դավթյան

27.11.2024թ.